Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի <<Խորոնքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի ռուսաց լեզու՝ (29 դասաժամ) և ֆիզիկա՝ (7 դասաժամ) առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- ,Հանրակրթության մասինե ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 10-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից :

Մրցույթը տեղի կունենա 2024թ. սեպտեմբերի 13-ին՝ ժամը 14:00-ին՝ Խորոնքի միջնակարգ դպրոցում. հասցե՝ Արմավիրի մարզ՝ գ. Խորոնք՝ Վ. Տերյան 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 78-81-81 հեռախոսահամարով: